

**ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ
930-950-ԱԿԱՆ ԹԹ.**

Արաբական խալիֆայութեան կողմից Պարսկաստանի նոսաճումից յետոյ Ատրպատականի իրանական ցեղերն իսլամացուեցին եւ հետզհետէ ձուլուեցին արաբների մէջ: Ատրպատականը Պարսկաստանի մեծ մասի պէս արաբների կողմից նուաճուեց համեմատաբար «խաղաղ» ձեւով տեղացի ցեղապետների հետ արաբ զորապետների կնքած պայմանագրերի հիման վրայ:՝ խալիֆայութիւնը Ատրպատականի արաբ կառավարչին օտտեց Արմինիայի (Հայաստանի, Վրաստանի եւ Աղուանքի) նկատմամբ որոշակի իրաւագորութեամբ: Ատրպատականը հաստատուած արաբական ամիրաները ջանադրաբար հետամուտ էին Արմինիայի հանդէպ իրենց արտօնուած իրաւունքների գործադրմանը: Թ. դ. վերջերից Հայոց Բագրատունիների Թագաւորութիւնը թօթափեց արաբական գերիշխանութիւնը, բայց խալիֆայութիւնում ընդունուած կարգի համաձայն, Հայաստանը պէտք է վճարէր որոշակի հարկագումար: խալիֆայից այն գանձելու իրաւունքներ 890 թ. ստացան Ժագունով միջին ասիացի Սաջեան ամիրաները:՝

Հարկահանութեան պատճառով Ատրպատականի տէրերը յաճախ դիմում էին բռնի միջոցների նաեւ Վասպուրականի Արծրունեաց Թագաւորութեան նկատմամբ: Դրանք շարունակուեցին նաեւ 930-950-ական թթ., երբ Արծրունիներն ստիպուած էին դիմադրաւել ոչ միայն Ատրպատականի, այլեւ Միջագետքի Համդանի ամիրաների յարաճուն ճնշմանը: Ըստ Իբն ալ-Ասիրի, 931 թուականին Ատրպատականի կառավարիչ Մուֆլիհ (Եուսուֆ Սաջեանի եր-

1 Հմմտ. А. КОЛЕСНИКОВ, Завоевание Ирана арабами, Москва, 1982, с. 153.

2 А. МЕЦ, Мусульманский ренессанс, Москва, 1973, с. 117.

բեմնի զօրակիրը) ստուարաթիւ զօրքով ներխուժեց «Իբն ալ-Դայ-րանիի (Փագիկ Արծրունու - Վ.Վ.) երկիրը եւ կռուեց նրանց դէմ. սպանեց նրա մարդկանց, կողոպտեց նրանց ունեցուածքը: Իբն ալ-Դայրանին ամրացաւ իր մի բերդում: Հայերից այնքան շատ կոտորեցին, որ ասում է, թէ դրանց թիւը հասնում էր հարիւր հազարի»:՝³ Այս տեղեկութիւնն անշուշտ, չափազանցուած է եւ միտումնաւոր: Ամիրային չյաջողուեց կախման մեջ դնել Արծրունի թագաւորին: Նրա արչաւանքը աւարառուական էր եւ վաղանցուկ:

Միջագետքի Համդանի ամիրաները եւս առիթը բաց չէին թողնում Վասպուրականի թագաւորութիւնը կախման մէջ դնելու եւ արաբական խալիֆայութեանը նրանց մուծած հարկը իրենց փոխանցելու համար: Նման մի փորձ կատարեց Համդանի Նասր ալ-Դաուլան 935 թ. ներխուժելով Վասպուրականի Անձեւացիք գաւառ:⁴ Սակայն նրան չյաջողուեց հարկ կորզել Վասպուրականի տէրերից: Ինչպէս ճիշտ կերպով նշում է Մ. Կանարը, այդ ամիրայի իշխանութիւնը չի տարածուել նոյնիսկ Վասպուրականի Անձեւացիք գաւառի վրայ, եւ նա կարճատեւ ժամանակ յետոյ հեռացել է Զազիրա (հիւսիսային Միջագետք):⁵ Միջագետքի ամիրաները յետագայում նոյնպէս ոտնձգութիւններ կատարեցին Վասպուրականի թագաւորութեան դէմ: Քաղաքական անբարենպաստ պայմաններում Վասպուրականի Արծրունի թագաւորները սատարում էին Ատրպատականի այն ամիրաներին, որոնք ընդդիմանում էին իշխող գերդաստաններին: Նրանք չվարանեցին ապաստան տալ Սալարեան Մարզուբանի ախոյեան ազգով քուրդ Դայսամ իբն Իբրահիմին, որը ծագումով Մոսուլից էր: Նրա հայրը խարիջիները աղանդի հետեւորդ էր եւ 897 թ. փախաւ Ատրպատական,⁶ որտեղ մօտ 899 թ. ծնուեց Դայսամ Իբրահիմը: Վերջինս Ատրպատականի տիրակալ Եուսուֆ Սաջեանի զօրապետն էր, աչքի ընկաւ նրա մղած մարտերում եւ, հաւանաբար, դրա շնորհիւ 934 թ. կարողացաւ տիրանալ Ատրպատականին, սակայն երեք տարի յետոյ Գիլանի կառավարիչ Լաչ-

3 ԻԲՆ Ա.Լ.-Ա.ՍԻԻ, Թարգմ. եւ ծանօթագրութ. Ա. Տէր-Ղեւոնդեանի, Երեւան, 1981, էջ 179:

4 MISKAWAIH, The Concluding Portion of the experiences of the nations, II, transl. by D. Margoliouth ("The eclipse of the Abbasid Caliphate", V), Oxford, 1921, p. 368, 370.

5 CANARD M., Histoire de la Dinastie des Hamdanides de Jazira et de Sirie, I, Paris, 1953, p. 478.

6 MISKAWAIH IV, p. 37-38.

քարի իբն՝ Մարզին պարտութեան մատնեց նրան, ջանալով իշխել Ատրպատականին, ինչը սակայն նրան չյաջողուեց:⁷ Ըստ երեւոյթին Գագիկ Արծրունին սատար է կանգնել Դայսամ Իբրահիմին: Ժամանակակից արաբ մատենագիր Միսքավյանը հաւաստում է, որ Դայսամ Իբրահիմը մեծ վստահութիւն էր տածում Գագիկ Արծրունու նկատմամբ, որին ի պահ էր տուել նոյնիսկ իր գանձերը:⁸ Պարտուելով Դայսամ Իբրահիմից եւ նրան զօրակցող Ռէյի ամիրայի զօրքից, Լաչքարի իբն Մարզին արշաւեց Վասպուրական, թերեւս նպատակ ունենալով վրէժ առնել իր ախոյեանին օժանդակած Վասպուրականի թագաւորից: Սկզբում նրան յաջողուեց Արծրունեաց թագաւորութիւնը մատնել աւարառութեան: Անձեւացեաց տէր Ատոմը (Գուրգէնի որդին) փորձեց իր տիրոջթնեքը շահատակող հրոսապետին ետ պահել աւերասփիւռ ձեռնարկումներից, սակայն նրա յորդորները որեւէ ազդեցութիւն չունեցան: Այնժամ Ատոմ իշխանը դարանամուտ լինելով մի կիրճում,⁹ խոյսցաւ թշնամիների վրայ եւ խիզախ գրոհով ջախջախեց նրանց, դիմաթաւալ անելով հինգ հազար հոգու, այդ թւում նաեւ Լաչքարի իբն Մարզին:¹⁰ Վերջինիս որդին հօր մահուան վրէժն առնելու մղումով հրոսախումբն առաջնորդեց դէպի Վասպուրական, սակայն այս անգամ եւս Ատոմ Անձեւացին ծանր պարտութեան մատնեց թշնամիներին:¹¹

Դայսամ Իբրահիմի ամիրայութեան տարիներին լարուած էին նաեւ յարաբերութիւնները Միջագետքի Համդանի ամիրաների եւ Ատրպատականի միջեւ: 940 թ. Միջագետքի ամիրա Սայֆ ադ Դաուլան (Նասր ալ-Դաուլայի կրտսեր եղբայրը) Մայաֆարկինից ռազմի ելաւ Ատրպատականի դէմ եւ հասնելով Վանայ լճի ափեզերք, բանակեց Դատուանում: Հաւանաբար նա տեղեակ էր Գագիկ Արծրունու եւ Դայսամ Իբրահիմի միջեւ եղած բարիդրացիական կապերին, ուստի որոշեց կանխաւ իրեն ձերբազերծել Վասպուրականի տիրոջ հնարաւոր սպառնալիքից եւ ապահովել իր թիկունքը, անշուշտ,

7 Նոյն տեղում, էջ 36:

8 Նոյն տեղում, էջ 36-37:

9 Այդ կիրճը ընկած էր Տիգրիս գետի արեւելակողմում եւ սահմանակցում էր Տիգրանակերտի գաւառին: ԺԲ. դարից այդտեղ բնակութիւն հաստատեցին նաեւ քրդերը (HUART C., *Une razzia en Arménie au X-e Siècle*) "Revue des Etudes Arméniennes", 1, fasc. 4 (1921), p. 420.

10 IBN MISKAWAH, IV, p. 447-448.

11 Նոյն տեղում:

երկուստեք համաձայնութեան հիման վրայ: Այդ նպատակադրու- մով Սայֆ ադ Դաուլան իրեն մօտ՝ Դատուան հրաւիրեց Գագիկ Արծրունուն եւ Հարաւային Հայաստանում իշխող ուրիշ նախարար- ների: Արաբ պատմագիր Իբն ալ-Ագրակի հաղորդման համաձայն, Սայֆ ադ-Դաուլան Գագիկ Արծրունուց վերցրեց Շահրան եւ ալ-Համիդ ամրոցները:¹² Շահրանը հաւանաբար նոյնական է Վասպուրակա- նի Ճուաշ գաւառի Շամիրամ բերդի հետ, որը վկայուած է Թովմա Արծրունու եւ Անանունի երկերում:¹³ Այդ ամրոցը գտնուում էր Վաս- պուրականի եւ Պարսկահայքի սահմանագլխին եւ արաբ մատենա- գիր Եակուտի մօտ յիշուում է Շամիրան ձեւով,¹⁴ ինչը որոշ հնչու- նային աղերս ունի Շահրանի հետ: Ալ-Համիդը նոյնացուել է Ա- միլկի հետ,¹⁵ ինչն, ի հարկէ, դժուար է ապացուցել: Հասկանալի է, այդ անուակի փայլամրոցը չէր կարող չգայթակղեցնել Համդանի ամիրային, հարկ եղած պարագայում այն իբրեւ ամուր յենակէտ, Արծ- րունի գահակալի դէմ օգտագործելու համար: Ալ-Համիդ եւ Շահ- րան ամրոցները տեղորոշուել են նաեւ Վանայ լճի հարաւ-արեւ- մըտեան ափեզերքին, այն հիման վրայ, որ «դրանով Համդանեան- ների խլած հողերը մի ամբողջութիւն էին կազմում»:¹⁶ Անշուշտ, Սայֆ ադ-Դաուլան նախքան Ատրպատականի դէմ արշաւելը հոգ էր տանելու նրա սահմանների մօտ յուսալի յենավայրեր ստեղծելու մասին: Պատահական չէր, որ յիշեալ ամրոցներին տիրանալուց ան- միջապէս յետոյ նա ներխուժեց Ատրպատական:¹⁷ Թէեւ Իբն ալ-Ագ- րակը գրում է, որ իբր Հայաստանի թագաւորները այդ պահին են- թակայ էին Սայֆ ադ-Դաուլայի իշխանութեանը, սակայն իրակա- նում նրա ազդեցութիւնը Հայաստանում խիստ յեղեղուկ էր եւ չու- նէր գերիշխանութեան յատկանիշներ: Ստեղծուած պայմաններում,

12 FREITAG G., *Geschichte der Dynastien der Hamdaniden in Mosul und Aleppo* ("Zeits- schrift der Deutschen morgenlandischen Gesellschaft, X, Leipzig, 1856, s. 464-465); CA- NARD M., *Histoire de la Dinastie des Hamdanides*, I, p. 480-482.

13 ՏԵՍ ԹՈՎԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ - ԱՆԱՆՈՒՆ, Պատմութիւն տանն Արծրունեաց (Թարգմանութիւն եւ բնագիր), աշխ. Վրէժ Վարդանեանի, Երեւան, 1985, էջ 398, 418, 436:

14 ՏԵՍ Արաբական աղբիւրները Հայաստանի եւ հարեւան երկրների մասին, կազմեց Հ. Նալբանդեան, Երեւան, 1965, էջ 85:

15 MARKWART J., *Sudarmenien und die Tigrisquellen*, Wien, 1930, s. 460.

16 Ա. ՏԵՐ-ՂԵՒՈՒՆԻՆ, Արաբական ամիրայութիւնները Բագրատունեաց Հա- յաստանում, Երեւան, 1965, էջ 154:

17 FREITAG G., *Geschichte der Dynastien der Hamdaniden*, s. 465.

երբ Սայֆ ադ-Դաուլյան պատերազմի մէջ էր ոչ միայն Ատրպատականի, այլև Բիւզանդիայի դէմ, նա ինչպէ՞ս կարող էր հնազանդեցնել Հայաստանի թագաւորներին, իշխաններին: Անշուշտ, նա ջանում էր Վասպուրականը, Տարօն-Տուրուբերանը յուսալի յենարաններ դարձնել ընդդէմ Բիւզանդիայի,¹⁹ սակայն 940 թ. Խլաթը դրաւելուց յետոյ նա աւերեց Մուշ քաղաքը, ինչն անշուշտ, Տարօնի տիրոջ անհնազանդութեան հետեւանք էր: Նոյն թուականին Սայֆադ-Դաուլյան ներխուժեց Փոքր Ասիա, սակայն Կոլոնիա քաղաքի մօտ չարաչար պարտութիւն կրելով նահանջեց:²⁰ Այս մասին հակիրճ տեղեկութիւններ են հաղորդում Ասողիկը եւ Վարդան Արեւելցին:²¹ Ենթադրում է, որ նշեալ տեղեկութիւնը վերաբերում է 940 թ. դէպի Ատրպատական Սայֆ ադ-Դաուլյանի կատարած վերոյիշեալ արշաւանքին:²² Բայց թէ Ասողիկը եւ թէ Վարդանը նշում են Համդանի ամիրայի կողմից Կոլոնիա արշաւելու եւ նահանջի մասին: Ըստ Ասողիկի «յՅՁԸ թուականին Համտուն ի Կողոնիա եմուտ գօրօք բազմօք եւ անդրէն դարձաւ»: ²³ Նոյնն է հաւաստուած նաեւ Վարդան Արեւելցու մօտ, ուր նշուած է՝ «յերեփաւրիւր ութսուն եւ ութ՝ Համդուն ի Կողոնիա եմուտ գօրօք եւ անդրէն դարձաւ»: ²⁴

940-ական թուականների սկզբներին Ատրպատականի ամիրայութիւնը շարունակում էր սպառնալ նաեւ Հայոց Բագրատունիների թագաւորութեանը: 941 թ. Սալարեան Մարզուբանը պարտութեան մատնեց Դայսամ Իբրահիմին:²⁵ Հաւանաբար Մարզուբանի դրրդումով էր, որ Ատրպատականի զօրապետներից մէկը յարձակուեց Բագրատունեաց թագաւորութեան վրայ:

Ինչպէս հաղորդում է Անանուն պատմագիրը, յիշեալ զօրապետը «գօր գումարեալ յանկարծօրէն թեւակոխեաց անցանել ընդ

¹⁹ CANARD M., *Les Hamdanides et l'Arménie* ("Annales de l'institut d'etudes Orientales", t. VII, Alger, 1948, p. 85).

²⁰ FREITAG G., *Geschichte der Dynastien der Hamdaniden*, s. 467.

²¹ Ստեփանոսի Տարօնցոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, III, է, էջ 179, Հաւաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի, Վենետիկ, 1862, ԽՁ, էջ 88:

²² Ա. Տէր-Ղեկոնդեան, *նշ. աշխ.*, էջ 156:

²³ ԱՍՈՂԻԿ, էջ 179:

²⁴ ՎԱՐՎԱՆ, էջ 88:

²⁵ ԻԲՆ ԱԼ- ԱՍԻՐ, էջ 182-183:

Գողթնաստան եւ ընդ աւանն Նախնաւան, գրուամբ ածեալ եւ զգօրս Շարուրն կոչեցեալ գաւառի, գայ հասանէ մինչեւ ցմեծ մայրաքաղաքն Դուին. եւ վաղվաղակի հարկապահանջս եւ ոստիկանըս առաքեալ յԱյրարատեան գաւառ եւ մինչեւ ցԱրագածն կոչեցեալ ոտն, որ է բաժին կալուածոց Արասայ որդւոյ Սմբատայ՝ ընդ իւրումն նուանէ իշխանութեամբ»:²⁶

Աբաս Բագրատունի թագաւորը եւ Գագիկ Արծրունին այս շրջանում Ատրպատականի դէմ հանդէս էին գալիս համադաշն կերպով: Ամենայն հաւանականութեամբ նրանց միջեւ կնքուել էր զինադաշինք: Այսպէս կարծելուն թելադիր է Անանունի վկայութիւնը, ըստ որի Աբաս թագաւորը Ատրպատականի զօրապետի յարձակման մասին իրագեկում է Գագիկ Արծրունուն «ի ձեռն հրեշտակաց եւ հրովարտակաց, զի եկեալ փրկեսցէ զնա ի հարկապահանջ բռնութեանցն հինից»:²⁷ Գագիկ Արծրունին «զօրօք բազմօք» զօրակից եղաւ Բագրատունի արքային, որը մինչ այդ ծանր պարտութիւն կրելով թշնամուց, «փախստեայ եղեալ մագապուր անկանի յաշխարհն Վրաց»:²⁸ Գագիկ Արծրունու զօրագնդերն Այրարատ հասան այն պահին, երբ թշնամին բանակել էր Դուինի մատոյցներում: Վասպուրականի թագաւորութեան քաջարի զօրքը փայլուն յաղթանակ տարաւ, գրաւելով Դուինը, որի երիցանին («Մերք քաղաքին») Գագիկ Արծրունուց հայցեց «զխաղաղութիւն, տալով հարկըս եւ պատանդս»:²⁹

Ըստ երեւոյթին Դուինը Արծրունիներու կախման մէջ մնաց մինչեւ Գագիկի մահը, իմա՝ 943 թ.: Ենթադրուում է, որ այն Արծրունեաց թագաւորութեան կազմում էր նաեւ Գագիկի յաջորդների օրօք:³⁰ Բայց սկզբնաղբիւրներում որեւէ տուեալ չկայ, որը կարող էր հիմք դառնալ այդ գայթակղիչ ենթադրութեան համար:³¹

Յայտնի է, որ 953 թ. հայոց թագաւոր Աշոտ Ողորմածը փորձեց Շարդադեան ամիրայից գրաւել Դուինը, սակայն անյաջողու-

26 Տե՛ս ԹՈՎՄԱ ԱՐՄՐՈՒՆԻ - ԱՆԱՆՈՒՆ, էջ 464:

27 Նոյն տեղում:

28 Նոյն տեղում:

29 Նոյն տեղում, էջ 468:

30 В. ВАСИЛЬЕВСКИЙ, Советы и рассказы византийского боярина XI в. ("Журнал министерства народного просвещения", 206, с. Петербург, 1881, с. 110-111).

31 Հմմտ. MINORSKY V., *Studies un Caucasian History*, London, 1953, p. 5-6.

Թիւն կրեց:

941 թ. Այրարատը շահատակող ատրպատականեան հրոսախմբի պարտութիւնը եւ Գագիկի կողմից Դուինին տիրանալու փաստը զօրեղ ազդակներ էին Սալարեան Մարզուբանի նուաճողական նկրտումները չափաւորելու, Հայաստանի թագաւորներին կախման մէջ դնելու նրա ծրագրերն ի դերեւ հանելու համար: Այդ յաղթանակն անշուշտ, մեծացրեց Գագիկի հեղինակութիւնը: Յատկանշական է, որ նոյն 941 թ. Մարզուբանից պարտութիւն կրած Դայսամ Իբրահիմը Միսկավայհի վկայութեամբ՝ «մեկնեց իբն ադ-Դայրանիի (Գագիկ Արծրունու - Վ.Վ.) մօտ, քանզի վստահութիւն էր տածում նրա հանդէպ: Բացի այդ, [Դայսամն] իր գանձերը պահ էր տուել նրան: Մարզուբանը գրեց [Գագիկին], պահանջելով բանտարգել անել Դայսամին, բայց նա մերժեց: Յետագայում [Գագիկը] ստիպուած եղաւ անսալ Մարզուբանին եւ կալանել Դայսամին, սակայն [Մարզուբանից] խնդրեց չհարկադրել յանձնելու [Դայսամին], ինչին Մարզուբանը համաձայնուեց... Իսկ երբ [Գագիկը] կատարեց այդ, Մարզուբանը խախտեց պայմանը եւ թողաւ յղեց նրան, պահանջելով Դայսամին հասցնել իր նստավայր: [Գագիկը] որոշ ժամանակ մերժեց այդ պահանջը, բայց յետագայում ստիպուած եղաւ յանձնել Դայսամին»:³²

Փաստօրէն Գագիկ Արծրունի թագաւորը միջամուխ է եղել Ատրպատականի ամիրաների միջեւ արծարծուած պայքարին, սատար է կանգնել իր կողմը հակուած Դայսամ Իբրահիմին, ելնելով իր թագաւորութեան շահերից: Նա հասկանում էր, որ հարեւան ալլակրօն ամիրաների հետ բարիդրացիական յարաբերութիւնները կայունացնող գործօն են երկրի ներքաղաքական կացութեան, նրա արտաքին-քաղաքական հեղինակութեան, իր իշխանութեան կայունութեան համար: Ելնելով ոյժերի իրական յարաբերակցութիւնից, նա քաղաքական շրջահայեցութիւն դրսեւորեց նաեւ Դայսամի երդուեալ ախոյեանի՝ 941 թ. Ատրպատականին տիրացած Սալարեան Մարզուբանի նկատմամբ, անշուշտ, ելնելով այն հանգամանքից, որ տուեալ պահին թէ Ատրպատականին եւ թէ Վասպուրականին սպառնում էին Միջագետքին, հիւսիսային Ասորիքին եւ Աղձնիքին տիրացած Համդանիները: Դրանով է նաեւ բացատրուում Դայսամ Իբրահիմին Գագիկի կողմից Մարզուբանին յանձնելու փաստը:

32 MISKAWAH, IV, p. 36-37.

Գագիկ Արծրունին կարողացաւ օգտագործել Ատրպատականի տարբեր ցեղերի պարագլուխների միջեւ իշխանութեան համար մղուող պայքարը: Նրա օրօք Ատրպատականում իշխող տարր էին արաբները, քրդերը եւ մասամբ թուրքերը, անշուշտ, նաեւ պարսկալեզու ցեղերը (դեմիկներ եւ այլն):³³ Ինչպէս տեսանք, նա կարողացաւ կանոնաւորել թէ ազգով քուրդ Դայսամ Իբրահիմի եւ թէ Սալարեան Մարզուբանի՝ դեմիկների (դայլամցիների) պարագլխի հետ, կամենալով ձեռք բերել իր թագաւորութեան անվտանգութեան համար քաղաքական յուսալի կռուաններ: Արծրունեաց խորատես գահակալը կարողանում էր հաշուի նստել իրականութեան հետ, անհրաժեշտութեան դէպքում չէզոքացնելով երկրին սպառնացող վտանգը: Պետականօրէն օրինապատշաճ այդ ուղեգիծը քաղաքական տարամբօժ ելեւէջների պայմաններում շարունակեցին նաեւ նրա յաջորդները, մինչեւ 1021 թ. Հարադէտ արտագաղթը, երբ Արծրունիները չդիմանալով թուրքական ցեղերի ահազնակուլ յորձանքին, ստիպուած հեռացան Սեբաստիայի գաւառ, որն այդ պահին Բիւզանդիայի տիրապետութեան տակ էր:

Ատրպատականի ներքաղաքական գործընթացներին անհաղորդ չէր նաեւ Գագիկ Արծրունու յաջորդը եւ որդին՝ Դերենիկը (943-958 թթ.): Նրա յարաբերութիւնները Սալարեան Մարզուբանի հետ լարուած էին, ուստի Դերենիկ Արծրունին նոյնպէս զօրակից եղաւ Դայսամ Իբրահիմին, երբ վերջինս 953 թ. վերստին փորձեց տիրանալ Ատրպատականի ամիրայութեանը: Սակայն այս անգամ նոյնպէս նրան վիճակուած էր ճաշակել անկման դառնութիւնը: Պարտութիւն կրելով Մարզուբանից, Դայսամ Իբրահիմն ապաստանեց Վասպուրականի թագաւորի մօտ: Համաձայն Միսկավայհի մէկ այլ վկայութեան, Դայսամը կանխաւ օժանդակութիւն էր խընդրել Դերենիկ թագաւորից, նրա մօտ պահ տալով իր գանձերը:³⁴ Դայսամ Իբրահիմին բռնելու համար Մարզուբանը զօրքը շարժեց դէպի Վասպուրականի թագաւորութիւն: Ըստ երեւոյթին Դերենիկ Արծրունու պահանջով Դայսամը հեռացաւ Միջագետքի Մոսուլ քաղաք, ականալելով Համդանի ամիրայի զինական օջակցութիւնը:³⁵ Վեր-

33 WILLEMART P., *L'Etat Arménien du Vaspourakan* ("Miroir de l'histoire", 27, Paris, 1967, p. 71).

34 MISKAWAH, IV, p. 172.

35 А. БЫКОВ, Дайсам ибн Ибрахим ал-Курди и его монеты ("Эпиграфика Востока", X, Москва-Ленинград, 1955, с. 35).

Ղինիս յարաբերութիւնները Մարզուբանի հետ վատթարացել էին, ուստի Մոսուլի ամիրա Սայֆ ադ-Դաուլան (Համդանիների մի ճիւղից) զօրակցեց Դայսամ Իբրահիմին, որը վերջին անգամ փորձ կատարեց Ատրպատականի իշխանութեանը տիրանալու համար: Սակայն Սալմաստ քաղաքում պաշարուած Դայսամը չդիմացաւ Մարզուբանի զօրքի գրոհներին եւ լքուելով իւրայիններից, վերստին հեռացաւ Վասպուրականի թագաւորութիւն, ապաստանելով իր վաղածանօթ բարերարի՝ Դերենիկ Արծրունու մօտ, որը մինչ այդ հաւանաբար յոյս էր ակնկալում ի դէմս Դայսամ Իբրահիմի, Ատրպատականում ձեռք բերել իր թագաւորութեան նկատմամբ բարեհաճ քաղաքականութիւն վարող ամիրայի դաշինքը եւ այդպիսով ի դերեւ հանել այդ ամիրայութեան կողմից նիւթուող դաւերը: Սակայն Դերենիկ թագաւորին չյաջողուեց հասնել այդ նպատակի իրագործմանը: Տեղի տալով Մարզուբանի յամառ պահանջներին եւ չկամենալով վաստակել Ատրպատականի փաստական տիրոջ թշնամանքը, Դերենիկը որոշ ժամանակ ձգձգելուց յետոյ, ստիպուած Դայսամին յանձնեց Մարզուբանի ձեռքը:

Դայսամը բանտ նետուեց, ապա երկու տարի չանցած, Մարզուբանի մահուանից յետոյ սպանուեց:³⁶

Սալարեաններն իրենց հերթին ջանում էին ձեռք բերել Վասպուրականի թագաւորների բարեհայեցողութիւնը եւ նրանց ետ պահել իրենց ախոյեաններին զօրակցելուց, հակասալարեան ոյժերին պաստան տալուց: Արծրունի արքաներն այդ ժամանակ որոշ հարկագումար էին մուծում Մարզուբանին:³⁷ Վերջինս նրանց բարեհաճութիւնը շահելու նպատակադրումով չորս տարով Արծրունիներին ազատեց հարկատուութիւնից:³⁸ Սակայն Մարզուբանին չյաջողուեց իր կամքը պարտադրել Վասպուրականի թագաւորին: Այդ առումով ուշադրաւ փաստ է, որ Դայսամ Իբրահիմի պարտութիւնից փոքր-ինչ յետոյ մէկ այլ քուրդ ցեղապետ՝ Շաղդադեան Մուհամմադը Դուլինի պատերի տակ պարտութիւն կրելով Մարզուբանից, իր գերդաստանով փախաւ Վասպուրական, ապաստանելով Դերենիկ թագաւորի մօտ:³⁹ Այս փաստը եւս վկայում է, որ Արծրունիները

36 MISKAWAIH, IV, p. 172.

37 MINORSKY V., The Caucasian Vassals of Marzuban in 344/955 ("Caucasika", 1953, IV, p. 519-520).

38 Նոյն տեղում, էջ 520:

39 MINORSKY V., *Studies in Caucasian History*, p. 12-13.

շարունակում էին հովանաւորել հակասալարեան ոյժերին, ջանալով սահմանափակել Մարզուբանի ազդեցութեան ոլորտները ոչ միայն Ատրպատականում, այլեւ Հայաստանում: Դուինին տիրացած Սալարեանը լուրջ սպառնալիք էր յարուցում թէ Բագրատունեաց թագաւորութեան եւ թէ Վասպուրականի համար: Հաւանաբար, Դերենիկ Արծրունու յորդորով էր, որ Մուհամմադ Շադդադեանը դիմեց բիւզանդական իշխանութիւններին, խնդրելով զօրակից լինել իրեն ընդդէմ Սալարեան Մարզուբանի, սակայն Բիւզանդիայում նրա օգնակոչը ոչ մի արձագանք չգտաւ, եւ մէկ տարի յետոյ՝ 955 թ. Մուհամմադը իր մահկանացուն կնքեց Վասպուրականում: Նրա գերդաստանը չկամեցաւ մնալ «անհաւատների երկրում» (որպիսին նրանք համարում էին Վասպուրականի թագաւորութիւնը) եւ հեռացաւ կրօնակիցների մօտ՝ Ատրպատական,⁴⁰ Սալարեան ամիրային գերադասելով Արծրունիներից: Ըստ երեւոյթին Արծրունեաց Դերենիկ թագաւորը չկամենալով սրել յարաբերութիւնները Սալարեանների հետ, Շադդադեաններին հարկադրել է հեռանալ Վասպուրականից: Բացի այդ, վերջիններիս հետ հակամարտութեան մէջ էր նաեւ Աշոտ Ողորմածը՝ Բագրատունեաց գահակալը, որը 953 թ. նոյն Մուհամմադ Շադդադեանից պարտութիւն էր կրել Դուինի պարիսպների տակ, երբ ինչպէս վերը նշուեց, փորձում էր տիրանալ այդ հռչակաւոր քաղաքին:⁴¹ Դերենիկ Արծրունի թագաւորն անշուշտ, չէր կարող անտեսել նաեւ այդ իրողութիւնը: Նշենք նաեւ, որը Աշոտ Գ. Բագրատունին եւս հարկատու էր Սալարեան Մարզուբանին,⁴² ուստի հակուած չէր աւելի սրել նրա հետ ունեցած առանց այդ էլ լարուած յարաբերութիւնները:

Այսպիսով, 930-950-ական թթ. քաղաքական տարամերժ ելեւէջների պայմաններում Վասպուրականի թագաւորութեան Արծրունի գահակալները կարողացան սթափ ու կշռադատուած քաղաքականութիւն վարել հարեւան Ատրպատականի հետ, իրենց թագաւորութիւնն ապահովելով հնարաւոր շահատակութիւններից:

ՎՐԵԺ ՎԱՐԴԱՆԵԱՆ

⁴⁰ Նոյն տեղում, էջ 13:

⁴¹ Տէր-ՂեիՌՆԴԵԱՆ Ա., Դուինը Սալարեանների ժամանակ («Տեղեկագիր ՀՍՍՌ ԳԱ, հաս. գիտ.»), 1956, N 12, էջ 82-83):

⁴² MINORSKY V., *The Caucasian vassals of Marzuban*, p. 520.

**Relations between the Kingdom of Vaspourakan
and Adrpatakan in the Years 930-950**

(summary)

Vrej Vardanian

In the years 930-950 the Artsrouni kings of Vaspourakan, with circumspect and flexible politics, were successful in nullifying the threat posed by Atrpatakan. In case of necessity, they would ally themselves with those amirs of Adrpatakan, who had Armenian-friendly policies. That was the objective behind the patronage given to Daisam Ibrahim, Kurdish by origin, by the Artsrouni kings Gagik and Derenik. When the need arose, the Artsrounis allied themselves with the Bagratouni king against the threat arising from Adrpatakan.

Using their circumspect politics, the Artsrouni kings were able to remove the threat arising from neighbouring Emirates, making use of the opposition between the Handami amirs of Mesopotamia and the lords of Adrpatakan.